

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/9**

**23 ապրիլի 2014 թ.**

Քննարկվեց «Արայ» ՍՊԸ ներկայացուցչի 28.03.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ պետի 05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշման դեմ:

**«Արայ» ՍՊԸ ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.05.2011 թ-ի թիվ 1000174 հանձնարարագրի հիման վրա «Արայ» ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից իրականացվել են ստուգման գործողություններ: Արդյունքում 20.11.2013 թ-ին կազմվել է թիվ 1000174 ակտը /այսուհետ՝ Ակտ/, որով Ընկերությանը առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ ընդհանուր առմամբ 1,265,226,256 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎՀՏ կողմից նման որոշում կայացնելը լիովին անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշման համար հիմք հանդիսացող թիվ 1000174 վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Հայցադիմումն ընդունվել է վարույթ և արդեն իսկ տեղի է ունեցել դատական նիստ:

20.12.2013 թ-ին «ԱՐԱՅ» ՍՊԸ կողմից վարչական բողոք է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ 20.11.2013 թ-ի թիվ 1000174 ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ մասերն անվավեր ճանաչելու մասին: ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ ենթակետով և 70-րդ հոդվածի 3-րդ կետով 27.12.2013 թ-ի թիվ 62/8 որոշմամբ կասեցրել է «ԱՐԱՅ» ՍՊԸ նկատմամբ հարուցված վարչական վարույթը:

Հետևաբար վարչական մարմնի կողմից արդեն իսկ դատական կարգով վիճարկվող վարչական ակտի հիման վրա մեկ այլ որոշում ընդունելը հակասում է վերջինիս նախկինում կայացված որոշմանը, ինչպես նաև խախտում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ Հոդվածի դրույթներին:

Վերը նշված իրավական նորմը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց դեպքում վիճարկվող վարչական ակտը կարող է կատարվել: Տվյալ պարագայում բացակայում է վարչական մարմնի կողմից կազմված գրավոր հիմնավորումը, ինչպես նաև վիճարկվող ակտով նախատեսված հարկային պարտավորության գծով վճարման ենթակա գումարի գանձումը խախտում է հենց «ԱՐԱՅ» ՍՊԸ իրավունքները և օրինական շահերը, քանի որ վիճարկվող վարչական ակտով չի կարող պատասխանատվություն սահմանվել ընկերության նկատմամբ, քանի դեռ չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Ինչ վերաբերվում է սույն բողոքի խնդրո առարկա 2014 թ-ի հունվար ամսվա ԱԱՀ հաշվարկներին, ապա «ԱՐԱՅ» ընկերության ԱԱՀ գծով հարկային պարտավորությունները սույն թվականի հունվար ամսվա համար ըստ հաշվարկի կազմում է 22.586.170 դրամ, փաստացի վճարվել է 23.000.000 դրամ և առկա է 413.830 դրամ գերավճար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ վերոնշյալ որոշմամբ ակնհայտ ոչ իրավաչափ պարտավորություն է դրվել «ԱՐԱՅ» ՍՊԸ վրա, այն դեպքում, երբ ընկերությունը ոչ միայն կատարել է իր հարկային պարտավորությունը, այլև վճարման արդյունքում ունի 413.830 ՀՀ դրամի չափով գերավճար: Հետևաբար այս մասով ևս հարկային մարմինը ոչ միայն չէր կարող հարկային պարտավորություն սահմանել, այլև հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային տեսչության կողմից կարող էին հաշվանցվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին, քանի որ վերջինիս կողմից դրանց հետ վերադարձման դիմում չէր ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջներով գանգատաբերը խնդրում է վարչական ակտն ամբողջությամբ ճանաչել անվավեր:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ գանգատում նշված այն պնդումը, որ «Արայ» ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1000174 ստուգման ակտի (այսուհետ նաև ստուգման ակտ) դեմ 20.12.2013 թ-ին բերված վարչական բողոքի վերաբերյալ Հանձնաժողովն ընդունել է թիվ 62/8 որոշումը, որի համաձայն բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Հանձնաժողովի 62/8 որոշման համաձայն բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ոչ թե կասեցվել, այլ՝ կարճվել է:

Նշվեց նաև, որ «Արայ» ՍՊԸ կողմից 05.12.2013 թ-ին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որով խնդրվել է անվավեր ճանաչել ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ մասերը: ՀՀ վարչական դատարանը 12.12.2013 թ-ին կայացրել է թիվ ՎԴ/11476/05/13 որոշումը, որի համաձայն «Արայ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Այնուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի կողմից 05.03.2014 թ-ին ընդունվել է թիվ 0065 որոշումը՝ ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին: Ընդ որում, 05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշմամբ գանձման ենթակա գումարն իր մեջ ներառում է ստուգման ակտով առաջադրված պարտավորությունները:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Իր հերթին, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշմամբ գանձման առաջադրված գումարը ներառում է ստուգման ակտով առաջադրված պարտավորությունները, որոնց իրավաչափության հարցը քննարկվում է դատական կարգով, հետևապես Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ-ին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ 05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/11476/05/13 գործով գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի ընդունումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. «Արայ» ՍՊԸ ներկայացուցչի 28.03.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ-ին ձեռնպահ մնալ 05.03.2014 թ-ի թիվ 0065 որոշման կատարմանն ուղղված գործողություններից՝ մինչև ՀՀ վարչական դատարանում քննվող թիվ ՎԴ/11476/05/13 գործով գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտի ընդունումը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**